ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 52

«08» 10 2019 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 43 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Լոռու մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն վարչության պետի տեղակալի 1 հաստիք ավելացնելու, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի 1 հաստիքը կրճատելու և նույն վարչության պետի տեղակալի 1 հաստիք ավելացնելու ու Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքը կրճատելու և Արագածոտնի մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 13-ի N 37 ու հուլիսի 31-ի N 68 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 43 հրամանով հաստատված 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ բաժնի 4-րդ գլխի 11-րդ կետի «Վարչության դատախազ 2» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 9» բառերը՝ «Ընդամենը՝ 10» բառերով,

2) 2-րդ բաժնի 6-րդ գլխի 17-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 1» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 2» բառերով, իսկ նույն գլխի 18-րդ կետի՝ «Վարչության ավագ դատախազ 2» բառերը՝ «Վարչության ավագ դատախազ 1» բառերով,

3) 2-րդ բաժնի 9-րդ գլխի 29-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 1» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 2» բառերով, իսկ նույն գլխի 30-րդ կետի՝ «Վարչության ավագ դատախազ 3» բառերը՝ «Վարչության ավագ դատախազ 2» բառերով,

4) 2-րդ բաժնի 14-րդ գլխի ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 88»*** բառերը փոխարինել ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 89»*** բառերով,

5) 4-րդ բաժնի 23-րդ գլխի 86-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 1» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 2» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 6» բառերը՝ «Ընդամենը՝ 7» բառերով,

6) 4-րդ բաժնի 26-րդ գլխի 98-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 2» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 1» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 10» բառերը՝ «Ընդամենը՝ 9» բառերով,

7) 4-րդ բաժնի 27-րդ գլխի 102-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 3» բառերով, իսկ նույն գլխի «Ընդամենը՝ 12» բառերը՝ «Ընդամենը՝ 11» բառերով,

8) 4-րդ բաժնի 32-րդ գլխի ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 90»*** բառերը փոխարինել ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 89»*** բառերով,

9) 6-րդ բաժնի ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 88»*** բառերը փոխարինել ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում՝ 89»***, *իսկ* ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 90»*** բառերը փոխարինել ***«ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում՝ 89»*** բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ